

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՅ ԼԵՋՎԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՄԻ ՀԵՐԹԱԿԱՆ ԽՆԴԻՐԸ

Ս. Գ. ԱՐՐԱՀԱՄՅԱՆ

Հեղուն մի բարդ ու ամբողջական համակարգ է: Այդ բարդ համակարգը չի կարող միանգամից իր բոլոր կողմերով դառնալ գիտության ուսումնասիրության առարկա, որի պատճառով էլ այն ուսումնասիրվել և ուսումնասիրվում է ըստ իր բաղկացուցիչ մասերի: Որպես այդպիսի հիմնական բաղկացուցիչ մասեր սովորական լեզվաբանության կողմից ընդունված է համարել լեզվի բառային կազմը և քերականական կառուցվածքը:

Ինչպես երևում է, լեզվի բաղկացուցիչ մասերի շարքում առանձին տեղ չի հատկացվում հնչյունական համակարգին, և դա այն պատճառով, որ նա բառային կազմից և քերականական կառուցվածքից դուրս գոյություն ունեցող բաղկացուցիչ մաս չէ, այլ լեզվի հիշյալ երկու հիմնական բաղկացուցիչ մասերը ձևավորող նյութ, նրանց ձևավորման միջոց: Սակայն սա չի բացառում, որ լեզվաբանությունն զրազվի լեզվի հնչյուններով, և իրոք, լեզվաբանությունն ունի այդպիսի բաժին, հանձին հնչյունաբանության: Այնպես որ լեզվոնների կառուցվածքի ուսումնասիրությունը կատարվում է այս երեք հիմնական բաժիններով՝ հնչյունաբանություն, բառագիտություն, քերականություն:

Հեզվի կառուցվածքի ուսումնասիրության այսպիսի եղանակ է ընդունված բնականաբար նաև հայ լեզվաբանության մեջ: Այդ բաժանումները մենք տեսնում ենք թե՛ հայոց լեզվի դասընթացներում, թե՛ առանձին մենագրական ուսումնասիրություններում:

Հեզվի բաղկացուցիչ մասերի այսպիսի զուգահեռ ուսումնասիրումը, իհարկե, անհրաժեշտ է և պետք է շարունակել: Սակայն մենք գտնում ենք, որ լեզվի, որպես ամբողջական սխտեմի կառուցվածքի մասին ամբողջական և ճիշտ գաղափար կազմելու տեսակետից նրա միայն բաղկացուցիչ մասերի տաանձին-տաանձին ուսումնասիրումը քիչ է: Անհրաժեշտ է ուսումնասիրել նաև այդ բաղկացուցիչ մասերի փոխհարաբերությունը, լեզվի տարբեր կողմերի փոխհարաբերությունը:

Հայոց լեզվի բառային կազմի և քերականական (ձևաբանական, շարահյուսական) կառուցվածքի փոխհարաբերության նախնական որոշ ուսումնասիրությունը մեզ հանդեպրեց այն եզրակացության, որ ավելի նպատակահարմար և արդյունավետ է այդ հարցը քննել որպես բառի բառային¹, ձևաբանական ու շարահյուսական հատկանիշների փոխհարաբերության հարց:

¹ Բառային հատկանիշներ ասելով՝ նկատի ունենք բառերի, որպես բառային կազմի միավորների, իմաստային, ձևային (ոչ ձևաբանական) հատկանիշները:

Ինչո՞ւ պետք է այն ուսումնասիրել, և ի՞նչ կարող է նա տալ լեզվաբանությանը: Ամեն մի դիտություն պետք է իր ուսումնասիրության օրյակա՞ր ճանաչի այնպես, ինչպես որ այն կա: Երականում ի՞նչ է իրենից ներկայացնում լեզուն կազմության տեսակետից: Լեզուն իր բաղկացուցիչ մասերի, իր տարրեր կողմերի մի կողմ, օրգանական միասնություն է հանդիսանում: Մեր խոսքը մասնավորելով հայերենի ուսումնասիրության վրա, նշենք, որ մինչև այժմ հիմնականում ուսումնասիրվել են հայերենի բաղկացուցիչ մասերը, իսկ այդ մասերի կողմ, օրգանական կապը, նրանց փոխհարաբերությունները ըստ էության կարոտ են ուսումնասիրման: Եվ իրոք, այս կամ այն դիտության հարցերի ընդգրկման շրջանակները պետք է համապատասխանեն ուսումնասիրության օրյակա՞ր բնույթին, շրջանակներին, բխեն դրանցից: Լեզվաբանության և առանձին լեզուների ուսումնասիրության բաժինները, ինչպես ասվեց վերևում, բխում են լեզուների համապատասխան բաղկացուցիչ մասերի առկայությունից: Սակայն ինչպես որ բուն լեզվի մեջ բառային կազմը և քերականական կառուցվածքը կողք-կողքի դրվելով չէ, որ լեզու ե՞րբ կազմում, այնպես էլ այս կամ այն լեզվի բաղկացուցիչ մասերի ուսումնասիրությունը չէ միայն, որ կարող է առլ ա՞վել լեզվի ամբողջական պատկերը: Այսպիսով՝ ակնհայտ է, որ ժամանակակից հայ (և ոչ միայն հայ) լեզվաբանության մեջ կա մի զգալի բաց, որը և պետք է լրացնել: Այդ բացի լրացումն աչքանով անհրաժեշտ է, որքանով զա՛կ կօղնի լեզվի, որպես ամբողջական սիստեմի, ճիշտ ճանաչմանը:

Առհասարակ ամեն մի երևույթի ուսումնասիրման նշանակությունը դիտության մեջ՝ ուղիղ համեմատական է ուսումնասիրվող երևույթի նշանակությանը իրականության մեջ: Այստեղից էլ բխում է, որ լեզվաբանության համար, այս կամ այն լեզվի ամբողջական կառուցվածքի ճիշտ ճանաչման համար նրա բաղկացուցիչ մասերի կամ բառերի բառային, ձևաբանական, շարահյուսական հատկանիշների փոխհարաբերության ուսումնասիրման նշանակությունը ուղիղ համեմատական է այդ փոխհարաբերության նշանակությանը բուն իսկ լեզվի կառուցվածքի մեջ: Իսկ լեզվի մեջ այդ փոխհարաբերության դերն ու նշանակությունը գոնե ընդհանուր ձևով դնահատելու համար բավական է նկատի ունենալ, որ առանց այդ փոխհարաբերության՝ լեզուն ոչ թե իր բաղկացուցիչ մասերի, իր տարրեր կողմերի օրգանական ամբողջությունը էկազմեր, այլ նրանց մեխանիկական դումարը: Աներևակայելի է պատկերացնել լեզվի գոյությունն առանց այդ փոխհարաբերության: Ըստ որում այդ փոխհարաբերության դերն ու նշանակությունը պետք է նկատի ունենալ ոչ միայն լեզվի, այնպես ասած, ստատիկ վիճակի վերաբերյալ, որ բոտ էության ոչ այլ ինչ է, եթե ոչ լեզվի զարգացման մի էտապը, այլև հենց բուն զարգացման պրոցեսի վերաբերյալ, քանի որ լեզվի զարգացումը շատ կողմերով, ինչպես ցույց է տալիս ուսումնասիրությունը, այդ հատկանիշների փոխհարաբերության հիման վրա է կատարվում:

Բոտի բառային, ձևաբանական ու շարահյուսական հատկանիշների փոխհարաբերության ուսումնասիրման նշանակությունը ավելի ճիշտ պատկերացնելու համար նշենք, որ դա պատճառահետևանքային, փոխադարձ պայմանավորվածության հարաբերություն է, ինչպես էտանենք ստորև: Իսկ թե լեզվաբանության համար որքան կարևոր, միաժամանակ նաև դժվարին խնդիր է լեզվական երևույթների պատճառական կապի ուսումնասիրումը, այդ մասին

ակադեմիկոս է. Վ. Շչերբան գրել է հետևյալը. «Երևույթների պատճառական կապը կարող է հաջողությամբ գրվել միայն այնչափով, որչափով առաջ եփաշվի մասնավորի ընդհանրացման պրոցեսը: Մացի գրանից, այդ խնդիրը ամենադժվարին խնդիրն է լեզվաբանության մեջ: Ի՞նչն դա այլ պերպ լիներ, մենք վաղուց կունենայինք հիանալի ֆերականություններ և բառարաններ բոլոր հայտնի լեզուների համար»¹: Այսպիսով՝ ակնհայտ է բառի բառային, ձևաբանական և շարահյուսական հատկանիշների փոխհարաբերության ուսումնասիրման խոշոր նշանակությունը:

Ինչու է լեզվի համար այսքան կարևոր նշանակություն ունեցող երևույթի ուսումնասիրման անհրաժեշտության հարցը նոր է բարձրացվում:

Նախ, այլ լեզվաբանության առաջ նրա պարզացման տարրեր շրջաններում տարրեր խնդիրներ են եղել զրված, որոնք չէին հասունացնում լեզվի բաղկացուցիչ մասերի փոխհարաբերության ուսումնասիրման անհրաժեշտությունը:

Այնուհետև, լեզվի բաղկացուցիչ մասերի փոխհարաբերության հարցը կարող է առաջանալ և լուծվել այն ժամանակ, երբ այդ բաղկացուցիչ մասերը գտնվում են հիմնականում բավարար ուսումնասիրված են: Ի՞նչ իսկապես, հայոց լեզվի բաղկացուցիչ մասերի ուսումնասիրությունը վերջին տարիներին բավական ծավալվել է. հայոց լեզվի առանձին դասընթացներից բացի, հատկապես վերջին շրջանում նրա բաղկացուցիչ մասերի մի շարք հարցեր ենթարկվեցին մենագրական ուսումնասիրությունների, որոնց ակադեմիկոսներն անկասկած նպաստում է այս հարցի ուսումնասիրմանը:

Մակայն միայն լեզվի փաստական ուսումնասիրությունը բավական չէ հիշյալ խնդրի հասունացման համար: Դրան մեծապես նպաստում է նաև այն հանգամանքը, որ սովետահայ (իհարկե, նաև ամբողջ սովետական) լեզվաբանությունը հենց վերջին շրջանում է հիմնավորապես մտել մարքսիստական ուղին, իսկ դա նշանակում է, որ նա ստացել է իր օրյակտը ճշմարիտ և լիակատար ուսումնասիրելու մեթոդոլոգիական հզոր զենք: Մենք ամենից առաջ նկատի ունենք լեզվի, որպես իր պարզացման օրյակտիվ օրինաչափություններն ունեցող հասարակական երևույթ լինելու գրույթը, մատերիալիստական դիալեկտիկայի՝ երևույթներն իրենց փոխադարձ կապի և փոխադարձ պայմանավորվածության մեջ ուսումնասիրելու պահանջը, այդ պահանջով ուսումնասիրություն կատարելու մեթոդները և այլն: Ահա թե ինչու է լեզվաբանության ժամանակակից էությանում է առաջանում բառի տարրեր հատկանիշների կամ լեզվի կառուցվածքի տարրեր բաղկացուցիչ մասերի փոխհարաբերության ուսումնասիրման անհրաժեշտությունը:

Այնուհետև, երբ ասում ենք, որ բառի բառային, ձևաբանական և շարահյուսական հատկանիշների փոխհարաբերության, որպես պրոբլեմի, ուսումնասիրության անհրաժեշտությունը նոր է առաջ քաշվում մեզանում, չի նշանակում, թե այդ բնագավառում սոսկ ամայություն է տիրում: Ամայության վրա չի կարող պրոբլեմ առաջանալ: Կան առանձին երևույթների, բառաձևերի վերաբերյալ բացատրություններ՝ հիմնված բառերի տարրեր հատկանիշների հաշվառման վրա: Այդպիսի են, օրինակ, հայցական հոլովի ժամանակակից բարձրացումը, անորոշ զերբայի սեռականի ու ասպանի զերբայի տարբերակման

¹ Մ. В. Щербань, Очередные проблемы языкознания. Известия АН СССР. Отделение литературы и языка, том IV, выпуск 5, 1945, стр. 170).

հարցը, հոլովների կիրառությունների որոշ հարցեր և այլն: Մի խոսքով՝ եղածը միայն նախադրյալ կարելի է համարել պրոբլեմի հասունացման և լուծման համար:

Լեզվի մեջ բառականի և քերականականի փոխհարաբերության կարևորությունը տարրեր առիթներով հատկապես շեշտել է ակադ. Վ. Վ. Վինոգրադովը: Նա դրում է. «Լեզվի իրական պատմության մեջ քերականական և բառական ձևերն ու իմաստները օրգանապես կապված են, մշտապես ազդում են մեկը մյուսի վրա»¹: Լեզվի կառուցվածքի մասերի փոխհարաբերությունը նշել է պրոֆ. Գ. Սևակը. «Խոսքն անընդհատ պրոցես է, հոսանքաբեկ, որի մեջ նրա առանձին տարրերը (բառեր, արմատներ, ածանցներ, վերջավորություններ) անընդհատ փոխազդեցության մեջ են»²:

Մենք հավակնություն չունենք սույն հոգվածում տալու առաջադրվող հարցի սպառիչ լուծումը և անելու վերջնական եզրակացություններ: Մեր նպատակն է՝ հրապարակել ընթացքի մեջ դանդաղ մեր ուսումնասիրության որոշ արդյունքները, ցույց տալ թե ինչպիսի՝ նշանակություն կունենա հայոց լեզվի բաղկացուցիչ մասերի, նրա տարրեր կողմերի փոխհարաբերության ուսումնասիրումը և մասնադետալների ուղղորդությունը հրավիրել այդ կարևոր հարցի վրա:

Մենք կարծում ենք, որ բառի բառային, ձևաբանական, շարահյուսական հատկանիշների փոխհարաբերության ուսումնասիրումը երկու պլանով պետք է ընթանա.

1. Այդ երևույթը պետք է քննել իրեն այդպիսին, այսինքն բառի բառային, ձևաբանական, շարահյուսական հատկանիշների փոխհարաբերությունները քննել իրեն ուսումնասիրության բուն առարկա, նպատակ:

2. Այդ հարցը նաև պետք է դիտել որպես որոշ իմաստով ուսումնասիրման մեթոդի հարց, հետազոտման եղանակի հարց, որն անհրաժեշտ է բավարար չափով հաշվի առնել լեզվի առանձին բաղկացուցիչ մասերի, բառի տարրեր հատկանիշների ուսումնասիրման բնագավառում:

Իհարկե, սրանք միմյանցից կտրված չեն, այլ սերտորեն կապված են միմյանց հետ, լրացնում են միմյանց:

* *

Նախ՝ առաջին կետի մասին:

Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ բառի բառային, ձևաբանական և շարահյուսական հատկանիշների փոխհարաբերությունը պատճառահետևանքային, փոխադարձ պայմանավորվածության հարաբերություն է: Արդ, բառի ո՞ր հատկանիշն է որի պատճառը, ո՞րն է որով պայմանավորվում: Պատճառի և հետևանքի հարաբերության մեջ ի՞նչ դիրք ունեն բառի բառային, ձևաբանական, շարահյուսական հատկանիշները:

Բառի քննարկվող հատկանիշների փոխհարաբերությունը ճիշտ միատեսակ չէ տարրեր լեզուներում և նույնիսկ միևնույն լեզվի զարգացման տարբեր շրջաններում: Այս հարցում առանձնապես կարևոր նշանակություն ունի լեզվի կառուցվածքային տիպը. ասենք, տվյալ լեզուն թեքական է (կամ կցական),

¹ В. В. Виноградов, Русский язык, Учпедгиз, 1947, էջ 7:

² Գ. Սևակ, Ժամանակակից հայոց լեզվի դասընթաց, Երևան, 1953, էջ 29:

թե՞ անջատական: Պետք է տարբերություն դնել լեզվի տիպերի և քննարկվող հարցի հարաբերակցության մեջ: Այսպես, կցական և թեքական սիստեմի լեզուներում այդ հարաբերակցությունն ավելի քիչ զանազանություններ ունի, քան թե անջատական լեզվում՝ ի տարբերություն թե՛ կցականի և թե՛ թեքականի: Այսպես, անջատական տիպի լեզուներում բառի խոսքի մասային պատկանելության և հատկանիշների դիտակցման խնդրում կարևոր դեր է կատարում շարահյուսական և մասնավորապես շարադասական մոմենտը: Մինչդեռ թե՛ կցական և թե՛ թեքական տիպի լեզուներում նշված հարցում շարահյուսականի դերը համեմատաբար նվազ է: Կցական և թեքական լեզուներում բառերն ունեն իրենց որոշակի ձևարանական կատեգորիաները, այլ բան է և քննարկվող հարցի տեսակետից էական չէ՝ տվյալ լեզվական, քերականական իմաստը արտահայտված է արտաքին, թե՛ ներքին թեքումով: Ահա այս պատճառով էլ գրարարի և ժամանակակից հայերենի տիպերի նշած տարբերությունը (գրարարը՝ առավել թեքական, ժամանակակից հայերենը՝ ավելի կցական) չի ստեղծում համապատասխան տարբերություններ բառի հատկանիշների փոխհարաբերության հարցում:

Բառի բառային, ձևարանական և շարահյուսական հատկանիշների փոխհարաբերությունն այնքան բազմակողմանի և նուրբ ձևերով ու միջոցներով է արտահայտվում, որ չի կարելի ցույց տալ ինչ-որ մի ուղղագիծ հարաբերություն այդ հատկանիշների միջև, իբրև այս հարցի սպառիչ պատասխան: Այնուամենայնիվ այդ փոխհարաբերության ընդհանուր, գերիշխող ուղղությունը կարելի է որոշել տվյալ լեզվում, լեզվի տվյալ էտապում, կամ լեզուների որևէ խմբում ըստ կառուցվածքային տիպի:

Այսպես, ժամանակակից հայերենում և առհասարակ ամբողջ հայերենում (այլև համանման տիպի այլ լեզուներում) բառի քննարկվող հատկանիշների հարաբերությունը պատճառահետևանքային տեսակետից հիմնականում կարելի է տալ հետևյալ սխեմայով՝

Բառային հատկանիշ → ձևարանական հատկանիշ → շարահյուսական հատկանիշ:

Սակայն հենց անմիջապես նշենք, որ այս սխեման արտահայտում է քննարկվող հատկանիշների միայն ընդհանուր ուղղությունը և միայն ամենահիմնական կողմով է արտացոլում այդ հարաբերությունների իրական պատկերը:

Նախ, ընդհանուր ձևով ծանոթանանք բառի քննարկվող հատկանիշների կապի նշված հիմնական ուղղությանը:

Խոսքի մասերի և քերականական կատեգորիաների միջև գոյություն ունի էական կապ: Ոչ մի խոսքի մաս, բառերի ոչ մի խումբ չունի որևէ պատահական քերականական կատեգորիա: Բոլորովին էլ պատահական չէ, որ, օրինակ, գոյականը հոլովվում է, բայը խոնարհվում է, իսկ, ասենք, շաղկապը, եղանակավորող բառերը ոչ հոլովվում են, ո՛չ խոնարհվում: Յուրաքանչյուր քերականական կատեգորիա բխում է տվյալ կատեգորիան կրող բառերի, խոսքի մասի էությունից, իմաստային հիմնական ու ընդհանուր հատկանիշից:

Այդ տեսակետից քննենք հոլովի քերականական կատեգորիան: Մենք դիտմամբ այս կատեգորիան ենք վերցնում, որովհետև այսպես թե այնպես, տարբեր ձևերով կարող են հոլովվել բոլոր խոսքի մասերը, նույնիսկ լեզվական ամեն մի միավոր (հնչյուն, վանկ, նախադասություն և այլն), որի պատճառով

էլ ամենից շատ թերևս հոլովի կատեգորիայի վերաբերյալ է զգացվում հիմնավորման կարիքը, թե նա հատկապես ո՞ր խոսքի մասի, ո՞ր կարգի բառերի էությունից է բխում և ինչու: Բերենք սարքեր խոսքի մասերի, լեզվական տարբեր միավորների հոլովման օրինակներ: Նա նայում է գրքին, որպես իր ուսուցչի: Լավից չի կարելի դժգոհել: Կարդաց այդ գրքերից երկուսը: Նույնից շատ դժեմ: Ահագ-ի և ահագորեն-ի միջև կիրառական նուրբ տարբերություն կա: Երբ-ից առաջ ստորակետ նշանակիր, իսկ վաչ-ի վրա բացականչական նշան դիր և այլն:

Դիտելով այս փաստերը՝ առաջին հայացքից դուրս կարող է թվալ, թե ժամանակակից հայերենում հոլովի կատեգորիան անտարբեր է բառի իմաստի, խոսքի մասային իմաստի նկատմամբ: Սակայն այդպես չէ: Իրականում հոլովի կատեգորիան սերտորեն պայմանավորված է բառի՝ առարկայի իմաստ ունենալու հետ: Քերականական կատեգորիաները հանդիսանում են առարկաների, երևույթների հատկանիշների տարբեր հարաբերությունների լեզվական արտահայտություն: Այսպես, առարկայի անունը լեզվի մեջ սովորաբար այնպիսի հարաբերությունների մեջ կտրուկ է մտնել, ինչպիսի հարաբերություններ ունենում է առարկան իրականության մեջ:

Լեզվի, որպես մտածողության ձևի, մտքերի հաղորդման միջոցի, դերը ապահովելու համար կարևոր են ոչ միայն առարկաների հատկանիշների անվանումները, միայն անվանումներով հնարավոր չէ ճանաչել իրականությունը և միտքը ձևավորել ու հաղորդել: Չէ՞ որ իրականությունը առարկաների և հատկանիշների մեխանիկական գումար չէ, դրանք գտնվում են փոխադարձ կապի և պայմանավորվածության հարաբերության մեջ: Հետևապես և լեզվի հասարակական ֆունկցիայի ապահովման համար անհրաժեշտ է ճանաչել, գիտակցել, արտահայտել անվանվածի հարաբերությունը, որ ունի նա իրականության մեջ: Ավելին, եթե առարկայի կամ հատկանիշի հարաբերությունները չենք ճանաչում, նշանակում է, որ լավ չենք ճանաչում նաև հենց ինքը՝ առարկան, հատկանիշը:

Ընդհանրապես պետք է նկատի ունենալ, որ բառի քերականական հարաբերությունների արտահայտման մեջ որքան մեծ է ձևաբանական գործոնի դերը, այնքան նվազ է շարահյուսականի դերը և ընդհակառակը: Ինչպե՞ս է այս հարաբերությունը ժամանակակից հայերենում: Ժամանակակից հայերենը հիմնականում կցական տիպի լեզու է, և բառի խոսքի մասային հիմնական իմաստի, նրա հարաբերությունների դրսևորման գործում շարահյուսական կողմի դերը համեմատաբար փոքր է:

Հոլովի կատեգորիան ժամանակակից հայերենում և բարբառներում ունի օրյեկտիվ պատճառաբանվածություն. քերականական այս կատեգորիայի մեջ համապատասխանում է տրամաբանական անհրաժեշտությունը, անվան ունեցած օրյեկտիվ հարաբերություններին և հանդիսանում է վերջիններիս լեզվական

¹ Իհարկե, հայտնի է նաև, որ բառի ոչ բոլոր քերականական կատեգորիաներն են լեզվի զարգացման տվյալ շրջանում տրամաբանական և արտացոլում իրականության այս կամ այն կողմը: Ինչպիսին է, օրինակ, սեռի կատեգորիան ոտներենի և այլ լեզուների անվանական խոսքի մասերի սխտեմում, որը, սակայն, իր առաջացման շրջանում ճանաչվել է իրեն ռեալ գոյություն ունեցող հատկանիշների արտահայտություն: Ուրեմն՝ նույնիսկ քերականական կատեգորիաների՝ իրականության մեջ հիմք ունենալու հարցում այսօրվա առանձին շեղումները մի ժամանակվա լեզվամտածողությամբ պայմանավորված շեղումներ չեն եղել:

արտահայտությունը: Այս տեսակետից որոշ տարբերություն կա հին հայերենի և ժամանակակից հայերենի միջև: Զարգացման այդ տենդենցի ճանապարհին է, որ վերացան հատկանիշ ցույց տվող բառերի՝ համաձայնության նպատակով հոլովվելու մի շարք արտահայտությունները:

Ածականների, թվականների, հատկանիշ ցույց տվող որոշ դերանունների՝ հին հայերենում ունեցած հոլովվելու հատկանիշը հիմնականում շարահյուսական էր, և չէր բխում այդ բառերի ցույց տված հատկանիշների՝ իրականում ունեցած բնույթից: Հենց այդ հանգամանքն է, որ (այլ պատճառների հետ միասին) էական դեր է կատարել այդ բառերի հոլովի կատեգորիայի վերացման հարցում:

Ուրեմն՝ ինչպես բառի բառային իմաստից բխող անհրաժեշտությամբ բառը կարող է հոլովվել¹, այնպես էլ այդ անհրաժեշտության բացակայության պատճառով, որը (այդ անհրաժեշտության բացակայությունը) ինքնին բառային մի այլ իմաստի յուրահատկության արտահայտություն է, կարող է այն վերանալ: Երկու դեպքում էլ, ուրեմն, բառի ընդհանուր իմաստային հատկանիշը կարևոր դեր է կատարում:

Հոլովի կատեգորիան բնորոշ է ոչ միայն զուականների, այլև այն դերանունների համար, որոնք առարկա են ցույց տալիս (մի քանիսը շեղվում են այլևայլ պատճառներով): Այդպիսի դերանուններ են՝ ես, դու, ինքը, նա, սա, դա, ամենքը, ով և այլն: Այս փաստը մի անգամ ևս ցույց է տալիս, որ, իրոք, հոլովի կատեգորիան պայմանավորված է հոլովվող բառի՝ առարկա ցույց տալու հատկանիշով:

Արդյո՞ք այս պնդումը չի հակասում այն երևույթին, որ ամեն մի խոսքի մաս, լեզվական ամեն մի միավոր այսպես թե այնպես կարող է հոլովվել: Ո՛չ, չի հակասում: Դրանում համոզվելու համար պետք է նկատի ունենալ, որ առարկա ցույց տվող բառերը (զուականները և դերանունների մի մասը) բուն լեզվի մեջ միշտ հանդես են գալիս հոլովված ձևով և միայն՝ բառարաններում, կամ որպես բառեր թվարկվելու դեպքում կարող են գործածվել առանց հարաբերության իմաստի, առանց հոլովի, մինչդեռ մյուս խոսքի մասերը, ընդհակառակը, իրենց սովորական կիրառությունների դեպքում չեն հոլովվում և միայն երկրորդաբար կիրառվելիս կարող են հոլովվել:

Բառի բառային և ձևաբանական հատկանիշների փոխհարաբերության տեսակետից առանձնակի ուշադրության արժանի է այն հարցը, թե առարկա ցույց տվող խոսքի մասերը ինչու, ո՞ր դեպքում են հոլովվում ժամանակակից հայերենում և ինչպիսի՞ ազդեցություն են ունենում՝ իրենց էությունից չբխող հոլովի կատեգորիան կրելու դեպքում: Առարկայի իմաստ չունեցող բառերը հոլովվելիս երկրորդաբար ստանում են այն խոսքի մասի ընդհանուր իմաստային հատկանիշը, որին հատուկ է հոլովի կատեգորիան, այսինքն նրանք ձևով են բերում առարկայի ընդհանուր իմաստի որոշ տարր: Իսկ սա էլ նշանակում է, որ իսկապես հոլովի կատեգորիան ժամանակակից հայերենում կառավարվում է առարկայի իմաստին, քիտում է նրանից: Ինչպես առարկայի իմաստ ունե-

¹ Իսկ եթե չի հոլովվում, ապա այդ հարաբերություններն արտահայտվում են այլ միջոցներով:

² Վերացումը տեղի է ունենում շատ դանդաղ կերպով, պարտադիր չէ բոլոր լեզուների համար:

յող բառի գործածությունը հայերենում ենթադրում է հոլով, այնպես էլ հոլովի առկայությունը բառի մեջ, որ խոսքի մասի էլ պատկանելիս լինի այդ բառը, ենթադրում է առարկայի, առարկայականության որոշ իմաստ, որը կարող է արտահայտվել տարբեր ձևերով, տարբեր շափերով, երբեմն նույնիսկ դժվար նկատելի մնալ առաջին հայացքից:

Այդպիսի բառերի մեջ առարկայի ընդհանուր իմաստը կարող է տեղ գրտնել, օրինակ, հանձին տվյալ հատկանիշը կրող առարկայի իմաստի՝ մասնավոր կամ ընդհանուր ձևով (քո հողվածներից երկուսը (= երկու հողվածը) կարդացել եմ: Լավը (-լավ բանը) պետք է խրախուսել: Կարդալը (=կարդալու գործողությունը) զարգացնում է մարդկանց), հանձին տվյալ լեզվական միավորի անվան: (Եթե-ից (-եթե բառից, շաղկապից) առաջ ստորակետ գիր: Դ-ի և թ-ի (=դ և ք հնչյունների, բաղաձայնների) միջև ձայնային երանգի տարբերություն կա) և այլն:

Այսպիսով՝ առարկայի իմաստ չունեցող բառերի՝ որոշ դեպքերում հոլովվելու փաստի նշանակությունը դարձյալ ցույց է տալիս, որ հոլովի քերականական կատեգորիան ժամանակակից հայերենում միշտ արտահայտում է ունի հարաբերություններ, հետևապես և քերականականը նրա մեջ հանդիսանում է հոլովված բառի ունի հարաբերության լեզվական արտահայտություն, իսկ սա նշանակում է, որ ժամանակակից հայերենում հոլովի կատեգորիայի արտահայտության մեջ առկա է բառի բառային հատկանիշի հնարավոր առավելագույն համապատասխանություն և պայմանավորվածություն: Սա ժամանակակից հայերենի հոլովի կատեգորիայի առանձնահատկություններից մեկն է. ի տարբերություն հին հայերենի հոլովի կատեգորիայի, որն այս տեսակետից ուներ որոշ այլ յուրահատուկ կողմեր, որոնց մասին համառոտակի խոսվեց վերևում: Այս տեսակետից ժամանակակից հայերենը զգալի շափով տարբերվում է ժամանակակից այլ լեզուներից, օրինակ, ռուսերենից, որի մեջ հոլովի քերականական կատեգորիան ոչ միշտ է արտահայտում համապատասխան իրական հարաբերություններ, այլ հաճախ սոսկ քերականական նշանակություն ունի: Այդպիսին է, օրինակ, ածականի, թվականի, ինչպես և դերանունների մի մասի հոլովումը գոյականների հետ գործածվելիս՝ քերականական համաձայնության նպատակով:

Գո'ւցե այս դեպքում մեզ առարկեն՝ փաստարկելով բացահայտիչի և բացահայտյալի համաձայնությունը. մենք նկատի ունենք ժամանակակից հայերենի շարահյուսության մեջ ընդունված այն դրույթը, թե բացահայտիչը իր հոլովով միշտ համաձայնում է բացահայտյալին, և դրանից այն տպավորությունն է ստացվում, թե բացահայտյալը իր հոլովը թելադրում է բացահայտիչին:

Օրինակ՝ 1. Երևանը՝ Սովետական Հայաստանի մայրաքաղաքը, օրեցօր ծաղկում է: 2. Ուսուցիչը դո՛ւ է և իր միակ գերազանցիկից՝ Աշոտից: 3. Նրանք վերադարձան Հայրենիք՝ Սովետական Հայաստան:

Այս և նման օրինակներում, իրոք, բացահայտիչը և բացահայտյալը դրված են նույն հոլովով, այլև նույն թվով: Կարծում ենք, սակայն, որ դրա պատճառը բացահայտյալը չէ. սա չէ, որ իր քերականական հատկանիշը թելադրում է բացահայտիչին: Դրա պատճառն այն է, որ թեև բացահայտիչը բացահայտյալի յուրացումն է, բայց և՛ բացահայտիչը, և՛ բացահայտյալը կապված են խնդրառու կամ գերադաս բառին, սովորաբար՝ բայը — ստորոգյալին, և այս հարաբերության շնորհիվ են նրանք ստանում այս կամ այն հոլովը: Այսպես, վերևի օրին-

նականերից առաջինի մեջ թեև Սովետական Հայաստանի մայրաքաղաքը դիտվում է որպես Երևանը բացահայտչալի լրացում՝ բացահայտիչը, բայց մյուս կողմից այդ երկուսն էլ՝ թեև՝ բացահայտչալի և թեև՝ բացահայտիչը փաստորեն կապված են ստորոգյալի հետ։ Վերևի այդ օրինակի հետ համեմատենք հետևյալները։

1. Երևանը օրեցօր ծաղկում է։ Սովետական Հայաստանի մայրաքաղաքը օրեցօր ծաղկում է։

2. Նա դո՛հ է իր միակ գերազանցիկից։ Նա զո՛ն է Աշոտից։

3. Նրանք վերադարձան Հայրենիք։ Նրանք վերադարձան Սովետական Հայաստան։

Ինչպես երևում է, մեզ հետաքրքրող բաները ինչ հոյովով որ գրվում են միևնույն ստորոգյալի հետ առանձին-առանձին գործածվելիս (ոչ բացահայտչալի և բացահայտիչի կապակցության մեջ), այդ նույն հոյովով էլ գրվում են նույն ստորոգյալի հետ բացահայտիչի և բացահայտչալի կապակցության մեջ գործածվելիս։

Դա առավել էս երևում է բացահայտիչի և բացահայտչալի հոյովական անհամաձայնությունների ղեկավարման։ Ի դեպի ներքև, որ ճիշտ չէ այն պնդումը, թե ժամանակակից հայերենում բացահայտիչը միշտ համաձայնում է բացահայտչալին, և իբրև թե զրանց անհամաձայնությունները անընդունելի են գրական լեզվի նորմաների տեսակետից։ Իհարկե, երբեմն հանդիպում են փնարկվող կապակցության անհամաձայնության անընդունելի առանձին արտահայտություններ։ Սակայն կան այդ կապակցության համաձայնության նաև մի շարք դեպքեր, որոնք միանգամայն օրինաչափ են։

Օրինակ՝ Սովետական Միության Հայրենական Մեծ պատերազմի ընթացքում՝ 1941—1945 թվականներին, սովետական ամբողջ ժողովուրդը ցուցաբերեց անօրինակ հերոսություն և հայրենասիրություն։ Այստեղ՝ կոլտնտեսությունում, նա իրեն շատ լավ է զգում։ Անցյալ տարի՝ 1958 թվականին, գործարանի կոլեկտիվը գերակատարեց արտադրական պլանները։

Բացահայտիչի և բացահայտչալի անհամաձայնությունն այս օրինակներում անհայտ է։ Դրանցից յուրաքանչյուրը գրված է այն հոյովով, ինչ հոյովով որ կգրվեր, անկախ այդ կապակցությունից, ստորոգյալի հետ գործածվելիս։ Ուրեմն՝ բացահայտիչի և բացահայտչալի հոյովները փաստորեն որոշվում են բաց-ստորոգյալի հետ ունեցած հարաբերությամբ, իսկ բայի հետ կապված հոյովառությունը ժամանակակից հայերենում օրվելով հիմք ունի, իրական հարաբերությունների արտահայտություն է։ Սա նշանակում է, որ բացահայտիչի և բացահայտչալի հոյովական համաձայնությունը նույնպես ենթարկվում է այդ ընդհանուր օրինաչափությանն ու սոսկ քերականական երևույթ չէ։

Այսպիսով, ժամանակակից հայերենում հոյովի կատեգորիան սերտորեն կապված է բաների իմաստային յուրահատկության հետ և հանդիսանում է իրական հարաբերությունների լեզվական արտահայտության միջոց։ Սա նշանակում է, որ բանի բառային հատկանիշի և ձևարանական հատկանիշի փոխհարաբերությունը այս դեպքում հասել է փոխադամանավորվածության առավելագույն աստիճանի։ Այս տեսակետից ժամանակակից հայերենը զգալի տարբերություն ունի հին հայերենից և ժամանակակից մի շարք լեզուներից։

Թեև տեղի սղության պատճառով այստեղ վերլուծելու հնարավորություն չունենք, բայց և այնպես նշենք, որ այդպիսի սերտ փոխհարաբերություն կա

նաև մյուս քերականական կատեգորիաների և դրանք կրող բառերի հատկանիշների (մասնավորապես իմաստային հատկանիշի) միջև:

Իսկ ինչո՞ւ են պայմանավորված բառի (և մասնավորապես հոլովվող բառի) շարահյուսական հատկանիշները: Որչափո՞ւ կարող է օգնել բառի հատկանիշների փոխհարաբերությունների ուսումնասիրումը բառի շարահյուսական պաշտոնների էությունը և դրանց պատճառները բացահայտելու հարցում:

Ընդհանրապես բառի շարահյուսական ֆունկցիան որոշվում է նրանով, թե տվյալ բառը քերականական ինչպիսի հարաբերության մեջ է գտնվում այն բառի հետ, որի հետ կապվում է: Այսպես՝ «Արամը հանույ՜նով դիտեց լիճը» նախադասության մեջ հանույ՜նով բառածերը ցույց է տալիս դիտելու գործողության ձևը, ձևի պարագայի ֆունկցիա է կատարում, իսկ լիճը անմիջականորեն իր վրա է կրում դիտելու գործողությունը և ուղիղ խնդիր է: Մինչդեռ, «Արամը հանույ՜նով դիտեց լիճը» նախադասությունում հետադիտակով բառը (որ նույնպես գոյական է, դրված նույն՝ գործիական հոլովով) միջոցի խնդիր է, ցույց է տալիս դիտելու գործողության միջոցը՝ գործիքը, իսկ «Արամը հաճույքով մտա՛վ լիճը» նախադասության մեջ լիճը բառը ոչ թե ուղիղ խնդիր է, ինչպես վերևի օրինակներում էր, այլ՝ տեղի պարագա: Իրոք որ փոխվեցին մեզ հետաքրքրող բառերի հարաբերությունները, և մենք միևնույն բառը (լիճը) կամ միևնույն խոսքի մասի միևնույն հոլովածու (հաճույքով, հետադիտակով) դիտում ենք որպես տարբեր պաշտոններ կատարող բառեր: Բայց ինչպե՞ս փոխվեցին և ի՞նչը փոխեց հարաբերությունները, իսկ սա նշանակում է՝ ինչպե՞ս է ստեղծվում հարաբերությունը, ի՞նչն է ընկած հարաբերության հիմքում՝ լեզվական տեսակետից:

Հայտնի է, որ յուրաքանչյուր հոլով ունի որևէ բնորոշ շարահյուսական ֆունկցիա: Այսպես, սեռականը համարվում է հիմնականում հատկացուցիչ, հայցականը՝ ուղիղ խնդրի, գործիականը՝ միջոցի անուղղակի խնդրի հոլով և այլն: Սա նշանակում է, որ կա էական կապ շարահյուսական ֆունկցիայի և հոլովի իմաստի միջև. վերջինս որոշակի դեր է կատարում շարահյուսական հատկանիշի հարցում:

Սակայն հայտնի է, որ միևնույն հոլովը կարող է կատարել մեկից ավելի պաշտոններ: Որինակ՝ տրական հոլովով, ըստ զարգացած քերականության, կարող են դրվել հանդման անուղղակի խնդիրը, նպատակի, տեղի, ժամանակի, չափի պարագաները: Գործիական հոլովով արտահայտվում են միջոցի անուղղակի խնդիրը, ժամանակի, տեղի, ձևի, չափի պարագաները և այլն:

Իսկ ո՞րն է միևնույն հոլովով տարբեր պաշտոններ արտահայտելու հնարավորության պատճառը: Դա պարզելու համար համեմատենք հետևյալ նախադասությունները:

Նա վերադարձավ մեքենայով:

Նա վերադարձավ երկու ժամով:

Նա վերադարձավ լեռներով:

Նա վերադարձավ նկարով:

Սրանք, ինչպես երևում է, միևնույն տիպի և կազմության նախադասություններ են, որոնց մեջ ընդգծված բառերը (երկրորդ օրինակում բառակապակցության երկրորդ բառը) գործածված են գործիական հոլովով, բայց կատարում են տարբեր ֆունկցիաներ. մեքենայով միջոցի անուղղակի խնդիր է, երկու ժամով՝ ժամանակի պարագա է, լեռներով՝ տեղի պարագա, նկարով՝ ձևի պարագա:

րագա: Եվ այս տարբերությունների հիմնական պատճառներից մեկը հոլովված բառի բառային հատկանիշն է, հանձին բառային իմաստի: Այսպիսով՝ բառի շարահյուսական ֆունկցիայի ձևավորման խնդրում կարևոր դեր ունի նաև բառի իմաստը:

Սակայն բառի իմաստի դերը ոչ միշտ է այդքան վճռական իր շարահյուսական ֆունկցիայի ձևավորման հարցում: Այդ դերը մեծ է հատկապես այն դեպքում, երբ հոլովված բառը անմիջական քերականական կախման մեջ չէ բայի ներգործական սեռից (կան նաև այլ դեպքեր, որոնք այստեղ չենք քննում): Այդպիսի անմիջական կախումը բառերը, անկախ նրանց իմաստային տարբերություններից, դարձնում է ուղիղ խնդիր:

Դրանում համոզվելու համար որոշ փոփոխության ենթարկենք վերոհիշյալ օրինակները, և ստորոգյալը, որ արտահայտված է շեղոք սեռի բայով, փոխարինենք ներգործական սեռի բայով: Այսպես՝

Նա սիրում է մեկնան:

Նա սիրում է լեռները:

Նա լսեց (քո) երկու ժամը:

Նա լսեց (քո) հեալը:

Եթե վերևի օրինակներում մեկ հետաքրքրող բառերը դրված էին միևնույն (գործիական) հոլովով, բայց կատարում էին տարբեր պաշտոններ, ապա այստեղ ևս այդ բոլոր բառերը դրված են միևնույն (հայցական) հոլովով և կատարում են միևնույն ֆունկցիան:

Առաջին օրինակում բայ-ստորոգյալը (վերադարձավ) շեղոք սեռի է, որի հետևանքով էլ նրա լրացումները ակտիվորեն են դրսևորում իրենց բառային իմաստը և դրա շնորհիվ արտահայտում տարբեր պաշտոններ, իսկ վերջին օրինակներում բայ-ստորոգյալը իր ակտիվությամբ (քանի որ ներգործական սեռի բայ է) որպես լրացում գործածվող բառերի իմաստային տարբերությունները մղում է երկրորդական պլանի վրա՝ փաստորեն քերականական տեսակետից դարձնելով ոչ էական:

Սա նշանակում է, որ հոլովված բառի շարահյուսական ֆունկցիաների ձևավորման հարցում այդ բառի իմաստային հատկանիշի դերը չպետք է չափազանցենք: Անհրաժեշտ է ցուցաբերել կոնկրետ մոտեցում և նկատի ունենալ, որ տարբեր դեպքերում բառի իմաստային տարբերությունը տարբեր չափով դեր կարող է կատարել: Ուրեմն՝ հոլովական իմաստի և բառական իմաստի զուգակցումը ոչ միշտ է միևնույն համամասնությամբ արտահայտվում շարահյուսական պաշտոնների ձևավորման գործում: Եթե երկրորդ օրինակում (ուր քննարկվող բառերը դրված են հայցական հոլովով), բոլոր բառերը նույն պաշտոն են կատարում, նշանակում է, որ այստեղ առավել վճռական դերը կատարում է բառի ձևաբանական հատկանիշը, հանձին հոլովական իմաստի: Բառի բառային իմաստը տվյալ դեպքում այնքանով է դեր կատարում, որքանով հնարավորություն է տալիս այդ բառերին հոլովվելու: Այսինքն այդ բառերի առարկայական ընդհանուր իմաստն է կարևոր, իսկ իմաստային ներքին տարբերությունները կարևոր չեն:

Այստեղից կարելի է անել մի հետևություն, որ բառի (մասնավորապես հոլովվող բառի) շարահյուսական հատկանիշների արտահայտման հարցում այդ նույն բառի բառային և ձևաբանական հատկանիշների դերը հակադարձ համեմատական են միմյանց. որքան մեծ է ձևաբանական հատկանիշի դերը, նույն-

քան փոքր է բառային հատկանիշի դերը, և հակառակը, բայց երբեք այդ հատկանիշներից ոչ մեկի դերը չի իջնում զրոյի, հետևապես և տարբեր դեպքերում տարբեր չափերով այդ երկու հատկանիշներն էլ դեր կատարում են:

Ինչպես արդեն որոշ չափով երևաց վերևի շարադրանքից, բառի շարահյուսական ֆունկցիայի ձևավորումը միայն նույն բառի բառային և ձևաբանական հատկանիշներով չի պայմանավորված: Վերևում տեսանք, որ դրանում դեր ունի նախադասության նաև այն անդամը, որի հետ քերականական կապի մեջ է մտնում տվյալ բառը: Ըստ որում նախադասության այդ անդամը տարբեր դեպքերում տարբեր չափով է դեր կատարում այդ հարցում: Այստեղ ևս պետք է նկատի ունենալ, որ բառի նշված դերի և վերջինիս տարբերությունների հարցում կարևոր նշանակություն ունեն դարձյալ բառի բառային և քերականական հատկանիշները:

Վերցնենք հայցական հոլովով դրված բառ, որ մի դեպքում կիրառվում է ներգործական սեռի բայի հետ, մյուս դեպքում՝ շեղոք սեռի բայի հետ:

Նա մտավ ջուրը:

Նա խմեց ջուրը:

Հասկանալի է, որ մտավ և խմեց բառերի բառա-քերականական տարբերությունները կարևոր դեր են կատարում այն բառի (ջուրը) ֆունկցիայի ձևավորման հարցում, որը քերականորեն լրացնում է իրենց: Մտավ և խմեց բայերի մեջ անմիջականորեն, իհարկե, սեռի տարբերությունն է աչքի ընկնում, որը ձևաբանական հատկանիշ է: Բայց դա կտրված չէ նույն բայերի իմաստից, այլ հենց այդ բայերի բայական իմաստից՝ գործողության բնույթից բխող հատկանիշ է:

Այսպիսով, վերոհիշյալ և նման դեպքերում բառի շարահյուսական ֆունկցիան պայմանավորված է այդ բառի բառա-ձևաբանական հատկանիշների և գերադաս բառի բառա-ձևաբանական հատկանիշների հարաբերությամբ: Ինչպես ասվեց վերևում, ոչ միշտ է, որ բառի հատկանիշները կարող են որոշակիորեն երևալ. դրա պատճառը բառի այդ հատկանիշների հաճախակի հանդիպող անհամամասնությունն է:

Բառի ձևաբանական և շարահյուսական հատկանիշները պատճառաբանելիս մինչև այժմ խոսել ենք բառի աչյափսի իմաստային հատկանիշների մասին, որոնք ունեն օբյեկտիվ հիմք, այսինքն, երբ բառի իմաստային յուրահատկությունը հանդիսանում է այդ բառի անվանած առարկայի կամ հատկանիշի յուրահատկության արտահայտություն: Տեսանք, որ իմաստային այդպիսի հատկանիշները բառի ձևաբանական և շարահյուսական հատկանիշների հարցում էական դեր ունեն:

Սակայն բառի իմաստային ոչ ամեն մի հատկանիշ է, որ ունենում է օբյեկտիվ բնույթ և հանդիսանում բառի ցույց տված առարկայի ու հատկանիշի յուրահատկության արտահայտություն: Այս տեսակետից հատկանշական են առանձնապես դերանունները: Դերանունների իմաստի մեջ օբյեկտիվ կողմն այն է, որ նրանք ցույց են տալիս առարկա, առարկայի հատկանիշ, գործողության հատկանիշ և այդ պատճառով էլ հարաբերակից են գոյականին, ածականին, իվականին, մակրային: Իսկ, այսպես ասած, սուբյեկտիվ կողմն այն է, թե դրանք ինչպես են ցույց տրվում դերանունների միջոցով: Եթե վերոհիշյալ խոսքի մասերը առարկան կամ հատկանիշը անվանում են, ապա դերանունները ոչ թե անվանում են այդ նույն առարկան, հատկանիշը, այլ դրանք ցույց են

տալիս որևէ հարաբերությունը և ունեն շտաբերակված իմաստ: Այսպես, ուսուցիչ, գլուղալի, նս բառերով անձ է ցույց տրվում: Սակայն դրանց միջև կա այն էական տարբերությունը, որ եթե ուսուցիչ, գլուղալի բառերով անվանվում է անձը տարբեր տեսանկյուններով, ապա հա-ը ոչ թե անվանում է, այլ ցույց է տալիս անձ՝ դիմադին հարաբերությամբ և ունի շտաբերակված իմաստ: Դերանունների իմաստի այս կողմը կարելի է համարել նրանց իմաստի սուբյեկտիվ կողմը՝ վերևում նշված առումով: Արդ. քերականական հատկանիշների ձևավորման, արտահայտության հարցում բառի իմաստի միայն օբյեկտիվ կողմն է ղեր կատարում, թե՛ նաև սուբյեկտիվ կողմը: Պետք է ասել, որ այս խնդրում բառիմաստի սուբյեկտիվ կողմը ևս ղեր է կատարում:

Դա ցույց տանք դերանունների վրա:

Յուրաքանչյուր դերանուն ընդհանուր առմամբ իր շարահյուսական հատկանիշներով նման է այն խոսքի մասին, որին հարաբերակից է: Սակայն դրանց միջև կան նաև տարբերություններ: Տեսնենք՝ ի՞նչ տարբերություններ կան, օրինակ, առարկա ցույց տվող դերանունների և դոշականների (որոնք նույնպես առարկա են ցույց տալիս) շարահյուսական կիրառությունների միջև, և որն է դրանց պատճառը:

Փոշականների համեմատությամբ առարկա ցույց տվող դերանուններն ունեն սահմանափակ շարահյուսական կիրառություններ: Այսպես, ի տարբերություն դոշականների, նրանք հանդես չեն գալիս որպես որոշիչ, որոշյալ, հատկացյալ, կոչական և այլն: Պատճառարաններ, թե հնչյուն: Փոշականը որպես որոշիչ գործածվելիս նկատի է առնվում կամ վերցվում է այդ դոշականի իմաստի այս կամ այն կողմը, այսինքն՝ դոշականի ցույց տված առարկայի որևէ հատկանիշը՝ մի այլ առարկա բնորոշելու համար: Օրինակ, Բաւ սխաւ բառակապակցության մեջ Բաւ բառով սրտին է վերադրվում մի այնպիսի հատկանիշ (անզգայություն), որ կա Բաւ առարկայի մեջ: Եվ քանի որ առարկա ցույց տվող դերանունները որևէ առարկա չեն անվանում, ուստի հնարավոր չէ նրանց մեջ նկատի ունենալ որևէ առարկայի որևէ հատկանիշ: Այդ պատճառով էլ նրանք չեն գործածվում որոշիչի պաշտոնով:

Առարկա ցույց տվող դերանունների յուրահատկություններից մեկը, ինչպես ասվեց, այն է, որ որոշիչ չեն ընդունում, այսինքն՝ հանդես չեն գալիս իրեն որոշյալ: Այսպես, չի կարելի ասել լավ նա, խելոք դու, մեծ սա և այլն (հմտ. լավ գիրք, խելոք երիտասարդ, մեծ հրապարակ): Այդ դերանունների՝ որոշիչ չընդունելու պատճառը դարձյալ նրանց յուրահատուկ շտաբերակված և հարաբերության իմաստն է: Քանի որ դրանք ունեն շտաբերակված իմաստ, ապա զրանցով կարելի է ցույց տալ ամեն մի առարկա, ուրեմն և դրանք կոնկրետ հատկանիշով բնորոշվել չեն կարող: Այս զեպքում դերանունների շտաբերակված իմաստի դերն ավելի ակնհայտ է, քան թե հարաբերության իմաստի գերը, թեև դրանք կտրված չեն իրարից և լրացնում են միմյանց:

Առեւայն, օրինակ, կոչականի ֆունկցիա չկատարելու հարցում ավելի ակնհայտ է դերանունների հարաբերության իմաստի դերը: Ինչպես հայտնի է, կոչականով ցույց է տրվում, անվանվում է այն առարկան (սովորաբար անձը), որին դիմում է խոսողը: Իսկ դերանունների մեծ մասը յուրահատուկ հարաբերության պատճառով խոսակցին ցույց տալ չի կարող, ինչպես՝ ես, իմեք, սա, դա, նա, ոչ ոք, ամեն ոք և այլն:

Բայց կան այնպիսի դերանուններ, որոնցով կարելի է ցույց տալ խոսակցին: Դրանք բնականաբար երկրորդ դեմքի իմաստ ունեցող դերանուններն են՝ դու, ինձ: Խոսակցին կարելի է ցույց տալ նաև մի քանի այլ դերանուններով, վերջիններին վրա ավելացնելով երկրորդ դեմքի Վ հոգը, ինչպես՝ բոլորդ, ամենիդ, ամեն մեկդ, յուրաքանչյուրդ և այլն: Սակայն այս վերջինները ևս չեն գործածվում որպես կոչական դարձյալ իրենց հարաբերության յուրահատկության պատճառով: Հայտնի է, որ կոչականը քերականական հարաբերության մեջ չի մտնում այլ բառերի հետ: Սակայն դերանուններն իրենց իմաստային յուրահատկության պատճառով հարաբերության մեջ են մտնում այլ բառերի հետ, և հնարավոր չէ դերանունները գործածել աֆնպես, որ նրանցով դիմենք խոսակցին ու միաժամանակ հարաբերության մեջ չմտնեն (դերանունները) այլ բառերի հետ: Այդ պատճառով էլ նրանք չեն գործածվում իբրև կոչական:

Կարելի է բերել այլ փաստեր ևս: Սակայն բերված փաստերն էլ բավական են համոզվելու համար, որ բառի իմաստի որոշ բնույթի յուրահատկությունները հաճախ պատճառ են դառնում նրա շարահյուսական կիրառությունների սահմանափակման:

Լինում է նաև հակառակը՝ բառը իր իմաստային յուրահատկության շնորհիվ ձևեր է բերում շարահյուսական լայն կիրառությունների հնարավորություն: Հետաքրքրական է, որ այս երևույթը առկա է նաև դերանունների մեջ: Վերցնենք ինչ դերանուններն շարահյուսական կիրառությունները: Ինչ-ը կարող է կատարել գոյականներին հատուկ ֆունկցիաներ, որովհետև նա ևս առարկա է ցույց տալիս և հղովվում է: Օրինակ՝ ի՞նչ ևս բերել հետդ: Ինչի՞ մասին է խոսքը: Ինչո՞ւ ևս ջարդել քարը և այլն:

Ինչ բառը շատ սովորական կերպով գործածվում է նաև որպես որոշիչ: Օրինակ՝ «Բառ դու ի՞նչ նախագահ ևս» (Ն. Զարյան): «Այս ի՞նչ հրաշք է (Վ. Անանյան): Քննարկվող հարցի տեսակետից առանձնապես հետաքրքրական է, որ այդ նույն բառը չլքված ձևով կարող է կատարել մի քանի պարագաների պաշտոն: Օրինակ՝ «Աստղիկ, ի՞նչ մեծացել ևս» (Դ. Դեմիրճյան): «Այ տղա, ի՞նչ էս վաղում» (Արազի): «Որդին չգայնացած գոռաց նրա վրա, թե ի՞նչ է ամբողջ բակը գլխին հավաքել» (Նար. Դոս): «Ձեն հանք է՛, ի՞նչ եք կանգնել» (Ն. Զարյան):

Ինչպես երևում է, ինչ դերանունը այն էլ ուղիղ ձևով ունի շարահյուսական կիրառությունների շատ տարբեր բնագավառներ: Դա ևս պետք է բացատրել նրա իմաստային յուրահատկությամբ: Բանն այն է, որ որոշ դերանունների բնականական իմաստը նրանց հաճախ հանդիմանում է խիստ վերացականության, որին գուցե ինքն էլ որոշ կողմերով ընդլայնվում են նրանց գործածության շրջանակները:

Նշենք նաև, որ դերանունները, մասնավորապես հարցական — հարաբերական դերանունները իրենց խիստ անորոշ և վերացական իմաստի շնորհիվ է, որ գործածվում են որպես հարաբերական բառեր՝ փաստորեն կատարելով շարահյուսական ֆունկցիա, իսկ մի քանիսն արդեն վերածվել են շարկապի, դրանց թվում նաև հենց ինչ-ը: Օրինակ՝ «Ահա մի քանի օր է, ինչ տեսնում եմ, որ դու կիրճերից վերադառնալով բարձրանում ևս ժայռերը» (Մուրացան):

Վերոհիշյալից երևում է, որ բառի շարահյուսական հատկանիշների հարցում կարևոր նշանակություն ունի բառի իմաստի ոչ միայն օբյեկտիվ, այլև սուբյեկտիվ կողմը: Ի դեպ նշենք, որ բառիմաստի սուբյեկտիվ կողմը կտրված

չէ նրա օրյեկտիվ կողմից և կարող է հնարավորություն ստեղծել նրա օրյեկտիվ կողմի մեջ ևս որոշ փոփոխությունների: Այդպիսի փաստ է, օրինակ, ինչ բառի իմաստի ծավալի մեծացումը, որը երևաց վերևի վերլուծումից, և որը սերտորեն կապված է նրա իմաստի սուբյեկտիվ կողմի (խիստ վերացականության և յուրահատուկ հարաբերության) հետ:

Այստեղից հետևում է, որ բառի բառային, ձևարանական, շարահյուսական հատկանիշների փոխհարաբերությունը թնկելիս անհրաժեշտ է պատշաճ ուշադրություն դարձնել բառի իմաստային նաև այն հատկանիշների վրա, որոնք հանդիսանում են խոսողի վերաբերմունքի ու վերաբերության արտահայտություն: Սակայն պետք է նկատի ունենալ, որ բառի քերականական հատկանիշների հիմքում գերազանցապես ընկած են բառի բառային այն հատկանիշները, որոնք ունեն օրյեկտիվ հիմք, հանդիսանում են վերջինիս լեզվական արտահայտություն:

Մինչև այժմ բառի բառային հատկանիշի մասին խոսելիս նկատի ենք ունեցել իմաստային կողմը: Իսկ բառի ձևային հատկանիշները քերականական նշանակություն կարող են ունենալ, թե՛ ոչ, Այո՛, բառի ձևային հատկանիշները կարող են նշանակություն ունենալ բառի քերականական ձևի համար, բայց ոչ քերականական իմաստի համար. օրինակ, գոյականի հոլովումների հարցում, ինչպես հայտնի է, որոշ գեր ունի հոլովվող բառի ձևային հատկանիշը՝ Հիշենք, օրինակ, որ ի-ով վերջացող բառերը սովորաբար ենթարկվում են ու հոլովման, յուն-ով վերջացողները՝ չա՛ն հոլովման և այլն: Սակայն քերականական ձևի համար նշանակություն կարող են ունենալ ոչ միայն ձևային, այլև իմաստային որոշ հատկանիշներ: Այսպես, օրինակ, ժամանակ ցույց տվող բառերը մեծ մասամբ ենթարկվում են վա հոլովման, անձ ցույց տվող որոշ բառեր՝ ոչ հոլովման և այլն:

Այս հատկանիշները հաշվի առնելով՝ պրոֆ. Գ. Սևակը ժամանակակից հայերենի հոլովումները բաժանում է երկու խմբի՝ ձևային և իմաստային: Նա գրում է. «Հոլովումների տարբերությունները, ինչպես առաջ երևում է նրանց առանձնահատկություններից, պայմանավորված են համապատասխան հոլովումների տակ ընկնող բառերի կա՛մ ձևով, կա՛մ իմաստով»¹: Պրոֆ. Գ. Սևակը ձևային է համարում ի, ու, ան, յան և ց հոլովումները, իսկ իմաստային՝ մյուսները՝ ուր, ոչ, վա: Սակայն հաջորդ էջում հեղինակը ձևային հոլովումների որոշման համար չափանիշ է համարում իմաստային որևէ հիմունք չունենալը. «Իմաստային որևէ հիմունք չունեն մեր մյուս հոլովումները (ի, ու, ան, յան և ց), ուստի և նրանք պետք է անվանվեն ձևային հոլովումներ»²:

Եվ այս վերջին հիմունքով էլ նա ձևային է համարում նաև ի հոլովումը: Մենք գտնում ենք, որ ձիշտը առաջին ձևակերպումն է, որից հեղինակը, ցավով, նահանջել է, ըստ երևույթին, ի հոլովումը որևէ կերպ հոլովումների այդ երկու տեսակներից որևէ մեկի մեջ տեղադրելու մղումով:

Բանն այն է, որ ի հոլովումը ո՛չ իմաստային է, ո՛չ էլ ձևային, որովհետև այդ հոլովման տակ մտնող բառերը այդ երկու հատկանիշների և առհասարակ որևէ հատկանիշի տեսակետից ընդհանուր օրինաչափության չեն ենթարկվում: Ինչպես հայտնի է, ի հոլովման է ենթարկվում ժամանակակից հայերենի հոլով-

¹ Գ. Սևակ, Ժամանակակից հայոց լեզվի դասընթաց, 1935, Երևան, էջ 271:

² Նույն տեղում, էջ 272:

վող բառերի մեծ մասը, բառեր, որոնք ունեն ամենատարբեր հատկանիշներ՝ ձևային և իմաստային տեսակետից: Այդ պատահական չէ, այլ ստեղծվել է հոլովումների սխառմի պատմական զարգացման ընթացքում նմանակության օրենքով: Այսպիսով, ի հոլովումը դադարել է ձևային կամ իմաստային հատկանիշ ունեցող բառախմբի հոլովում լինելուց, դուրս է եկել իմաստային և ձևային հոլովումների շարքից, իրեն է ենթարկել բազմազան հատկանիշներ ունեցող հսկայական քանակությամբ բառեր և դարձել նրանց համար ընդհանուր հոլովում. ուստի և մենք գտնում ենք, որ ի հոլովումը պետք է համարել ընդհանրական հոլովում:

Ի՞նչ նշանակություն ունի ի հոլովման բնույթի, տեղի այս, մեր կարծիքով. ճշտումը սույն հոլովածում քննարկվող հարցի և առհասարակ հոլովումների սխառմի դիտական գնահատման տեսակետից: Հարցը ժամանակակից հայերենի հոլովումներից մեկի տեղի, բնույթի ճշտումը չէ միայն: Բանն այն է, որ ի հոլովումը ձևային հոլովումների շարքում դնելով՝ ազդեցություն է ձևային հոլովումների սխառմում բառի ձևային հատկանիշի և ձևաբանական հատկանիշի սերտ կապի ճիշտ ըմբռնումը: Եվ ահա այս վերանայումով, նախ, վերանում է այդ ազդեցությունը, որոշակիորեն երևում է բառի ձևային և ձևաբանական հատկանիշների կապը, և վստահորեն ձևային հոլովումները կարելի էլինի բնորոշել ոչ թե իմաստային որևէ հիմունք չունենալու հանգամանքով, այլ ուղղակիորեն՝ ձևային որևէ հատկանիշ ունենալու փաստով:

Այնուհետև, հայանի է, որ ի հոլովումը իր այսօրվա վիճակին է հասել այլ հոլովումների բառերն իրեն ենթարկելու միջոցով: Լեզվի ստատիկ վիճակում լեզվական փաստերի, երևույթների գնահատումը եթե իրոք ճիշտ է, ապա պետք է գտնել ընդհանուր առմամբ ճիշտ պատկերացում տա նրա զարգացման ուղղության, փոխազդեցության մեջ գտնվող կողմերի մասին, քանի որ կենդանի լեզվի ամեն մի ստատիկ վիճակ հանդիսանում է նրա պատմական զարգացման մի էտապը: Բոլոր հոլովումները իմաստային և ձևային կողմից խմբերի մեջ ներառնելով՝ բոս էության կարող է ստեղծվել այն պատկերացումը, թե ժամանակակից հայերենի հոլովումները զարգանում են հենց այդ երկու խմբերի փոխազդեցության շնորհիվ: Մինչդեռ ժամանակակից հայերենի հոլովումների զարգացման գործում հակադրամիասնության մեջ գտնվող կողմերն են մի կողմից՝ ընդհանրական ի հոլովումը, մյուս կողմից՝ իմաստային և ձևային հոլովումները միասին վերցրած: Ուրեմն ի հոլովումը լինելով ընդհանրական հոլովում, հակադրվում է մյուս բոլոր հոլովումներին: Մենք չենք խոսում հակադրությունների ստորին օղակների մասին, այլ նկատի ունենք հակադրության, փոխազդեցության ամենաընդհանուր և հիմնական ուղղությունը:

Այսպիսով, ինչպես երևում է վերոհիշյալից, բառի բառային և քերականական հատկանիշների փոխազդեցության ճիշտ գնահատումը օգնում է ավելի ճիշտ հասկանալու լեզվական կատեգորիաների, երևույթների էությունը, փոխազդեցության մեջ գտնվող կողմերը, ճիշտ որոշելու զարգացման տեղեկները, ուղղությունը:

Վերևում տարրեր փաստերի քննարկումից երևաց, որ

ա) բառի իմաստային հատկանիշը կարող է պայմանավորել համապատասխան քերականական իմաստ և կատեգորիա.

բ) բառի ձևային հատկանիշը կարող է պայմանավորել քերականական ձևի հատկանիշ.

դ) բառի իմաստային հատկանիշը կարող է պայմանավորել բառի քերականական ձևի հատկանիշ:

Վերջին երկուսը ստորադասվում են առաջինին և հանդիսանում են նրա արտահայտության ձևերը: Այսպես, կիև — կնոջ, հայր — հոր, զինի — զինու օրինակներում մենք ունենք տարբեր ձև և տարբեր իմաստ ունեցող բառերի հոլովման տարբեր դրսևորումներ: Այդպես են ձևային և իմաստային հոլովումները: Կնոջ, հոր և զինու ձևերը քերականական նույն իմաստն են արտահայտում, և այս բոլորի մեջ ընդհանուրն այն է, որ դրանք առարկա ցույց տվող բառեր են, որոնք ունեն հոլովի կատեգորիա, և դրանով էլ արտահայտվում են հոլովող բառերի տարբեր հարաբերությունները, իսկ սրանք էլ հանդիսանում են իրական հարաբերությունների լեզվական արտահայտություններ: Նշենք նաև, որ բառի այն հատկանիշները (վերևի կետերից վերջին երկուսի մեջ նշվածները), որոնք սոսկ քերականական ձև են պայմանավորում, ինքնին վերցրած շարահյուսական դեր չեն կատարում:

* * *

Եթե բառի բառային, ձևաբանական, շարահյուսական հատկանիշների փոխհարաբերության ուսումնասիրումը հանդեսնում է էական եզրակացությունների, որոնք ինքնին շատ հետաքրքրական են և կարևոր՝ լեզվի, որպես ամբողջական սիստեմի, էությունը ճիշտ հասկանալու համար, ապա մյուս կողմից էլ այդ ընդհանուր եզրակացությունները օգնում են ուսումնասիրողին ճիշտ կողմնորոշվելու լեզվաբանական այս կամ այն հարցում: Ինչ խոսք, որ հարցի այս երկու կողմերը իրարից կտրված չեն. հանձինս բառի բառային, ձևաբանական և շարահյուսական հատկանիշների ուսումնասիրության այս երկու կողմերի՝ մենք գործ ունենք ինդուկցիայի և դեդուկցիայի փոխհարաբերության հետ:

Այժմ տեսնենք, թե բառի հատկանիշների փոխհարաբերության վերաբերյալ եզրակացությունները, լեզվի մեջ առկա այդ փոխհարաբերությունը ճիշտ կերպով հաշվի առնելը, ինչպես կարող են օգնել առանձին հարցեր ամփելի ճիշտ լուծելու, ինչպես և դիմված երևույթը պատճառաբանելու հարցում:

Համառուտակի քննենք, օրինակ, խոսքի մասերի որոշման հարցը բառի բառային և քերականական հատկանիշների փոխհարաբերության տեսանկյունով: Խոսքի մասերի որոշումը քերականության կենտրոնական հարցերից մեկն է, թերևս ամենակենտրոնականը: Այդ հարցը ծառացել է մասնագետների առջև դեռևս մեր դարաշրջանից առաջ հենց «խոսքի մաս» հասկացողության առաջացման հետ միասին, բայց դրա ըմբռնումը պատմականորեն փոխվել է պայմանավորված քերականության առաջ դրված խնդիրներով, լեզվաբանական դիտության դարդացման մակարդակով, վերջապես նաև ուսումնասիրողի ըմբռնմամբ ու մոտեցմամբ: Առանց մանրամասնությունների մեջ մտնելու, նշենք, որ անցյալում (մինչև մի երկու տասնամյակ առաջ) խոսքի մասերի որոշման հարցը մեղանում (և ոչ միայն մեղանում) լեզվաբանության ամենադժվար հարցերից մեկն է եղել, որի ոչ հստակ պատկերացման և լուծման պատճառով ձևարանությունը շփոթվում էր շարահյուսության հետ, խոսքի մասը նախադասության անդամի հետ: Խոսքի մասերի որոշման հարցում որոշիչ դեր էր հատկացվում բառերի ձևային, շարահյուսական հատկանիշներին:

Այդպիսի մոտեցումը վերանայվել է սովետահայ քերականագիտության կողմից. այդ վերանայման տեսական հիմնավորումը տվել է պրոֆ. Գ. Սևակը¹: Այդ վերանայումը դործնականում արտահայտված է պրոֆ. Ա. Ղարիբյանի «Հայոց լեզվի քերականություն» դպրոցական դասագրքում (Իհարկե, դպրոցական դասագրքի ընձեռած համեմատարար նեղ հնարավորությունների սահմաններում): Պրոֆ. Գ. Սևակը խոսքի մասերի որոշման հարցում իրավացիորեն շեշտը դնում է նրանց՝ «լեզվական իմացարանական միջոցներ» լինելու վրա:

Սովետահայ քերականագիտության կողմից խոսքի մասերի որոշման հարցի այս վերանայումը, անկասկած, մի նշանակալից առաջընթաց քայլ էր, որով ղգալի հստակություն մտցվեց խոսքի մասերի և նախադասության անդամների ըմբռնման մեջ: Խոսքի մասերի որոշման «հիմունք չեն կարող հանդիսանալ բառերի ո՛չ ձևական, ո՛չ իմաստարանական-հոգեբանական, ո՛չ, բառափոփոխական-բառակազմական, ո՛չ էլ շարահյուսական հատկանիշները թե առանձին-առանձին և թե՛ միասին վերցրած»²: «Բառերի խոսքի մասային կատեգորիաները որոշելիս պետք է վերանայ նրանց խոսքային հատկանիշներից և բառը դիտել իբրև լեզվական կատեգորիա, իբրև լեզվի մաս»³: Եվ որովհետև սա միակ բացարձակ սկզբունքն է համարվում, ապա դրանից էլ բխում է, որ «Յուրաքանչյուր բառ միայն մեկ (ընդգծումն իմն է — Ս. Ա.) ընդհանուր (հիմնական) իմաստ ունի և ըստ այդմ էլ այս կամ այն խոսքի մասի կատեգորիայի մեջ է ընկնում»⁴:

Խոսքի մասերի որոշման հիմունքի վերահիշյալ ձևակերպումը, որով պահանջվում է բառի խոսքի մասային պատկանելությունը որոշել միայն ընդհանուր իմաստով և այդ պատճառով էլ յուրաքանչյուր բառ միայն մեկ խոսքի մասի մեջ տեղադրել, խստությամբ չի կարելի կիրառել, և այն անվերապահորեն չի կիրառվել նույնիսկ նրա հեղինակի՝ պրոֆ. Գ. Ա. Սևակի կողմից: Այդ ձևակերպումը որոշ ծայրահեղություն ունի իր մեջ, որ դալիս է բառի բառային և քերականական, մասնավորապես շարահյուսական-կիրառական հատկանիշների ծայրահեղության հասնող հակադրումից՝ տեսականում: Մինչդեռ խոսքի մեջ բառայինը և քերականականը, ինչպես տեսանք վերևում, տարբեր հատկանիշներ լինելով հանդերձ, չեն նույնանում, բայց չեն էլ բացառում միմյանց: Վերահիշյալ ձևակերպումը, ըստ երևույթին, հետևանք է խոսքի մասերի որոշման հարցում անցյալում եղած շփոթությունները մինչև վերջ վերացնելու միտումի: Որքան էլ այդ միտումը դրական երևույթ է, այնուամենայնիվ պետք է հաշվի առնել բառականի և քերականականի ունալ փոխհարաբերությունը բուն լեզվի մեջ, հաշվի առնել միևնույն բառի՝ տարբեր խոսքի մասերի պատկանելու հնարավորությունը, որ արդյունք է լեզվի զարգացման. խոսքի մասերի փոխանցումների: Հենց ինքը պրոֆ. Գ. Սևակը դործնականում այդպես էլ վարվում է: Դրա տարացույց է անխկական կապերի, խոսքի մասերի փոխանցումների ընդունումը նրա կողմից:

¹ Տե՛ս Գ. Սևակ, Խոսքի մասերի ուսմունքը (Երևանի Պետական լսարանի «Գիտական աշխատություններ», հատ. 11 1939), «Ժամանակակից հայոց լեզվի դասընթաց», 1955 թրևան, էջ 222—238:

² Գ. Սևակ, Ժամանակակից հայոց լեզվի դասընթաց, Երևան, 1955, էջ 232:

³ Նույն տեղում, 233:

⁴ Նույն տեղում, էջ 250:

Արդ ե՞րբ է որ խոսքի մասերը որոշելիս հիշյալ հիմունքը չի կարող անվերապահորեն կիրառվել (թեև ոմանք փորձում են հենց այդպես էլ կիրառել), և բառի բառացին ու քերականական հատկանիշների փոխհարաբերությունը հաշվի առնելը որչափով կօգնի ճիշտ կողմնորոշվելու այդ կարևոր հարցում:

Փաստերը ցույց են տալիս, որ բառի խոսքի մասացին պատկանելությունը որոշելու համար երբեմն անհրաժեշտ է դիմել նրա կիրառություններին, շարահյուսական կողմին: Վերահիշյալ հիմունքը կարելի է համարել հայերենի խոսքի մասերի որոշման ոչ միակ, այլ հիմնական հիմունք: Բանն այն է, որ կան բառեր, որոնց խոսքի մասացին պատկանելությունը հնարավոր չէ որոշել խոսքից դուրս: Այդպիսի բառերից են.

Օգնական (1. զոյական. շրջկոմի քարտուղարի օգնական, 2. ածական. օգնական ուժեր հավաքադրել).

Ակտիվ (1. ածական. ակտիվ վերաբերմունք, 2. զոյական. շրջանի պարտիական ակտիվը).

Կեռ (1. զոյական. նա դռնակի կեռը հագցրեց, 2. ածական. կեռ փայտ).

Պատվին (1. զոյական. կաշեկ մեկի պատվին, 2. կապ. հյուրերի պատվին համերգ տալ).

Տեղ (1. զոյական. նստել տեղը, 2. կապ. նա պատասխանեց բո տեղ).

Նայած, չնայած (1. բայ. նայած տետրերը մի կողմ դիր, իսկ չնայածները՝ մյուս կողմը: 2. կապ. Չնայած դժվարություններին, մենք կատարեցինք մեր պարտավորությունները. կապ. նայած նրա դիրքին, ըստ այնմ էլ կվարվենք. 3. շաղկապ. Չնայած դու չեկար, մենք գնացինք).

Մինչև (1. կապ. յուստից մինչև հրապարակը, 2. շաղկապ. մինչև նա եկավ, մերոնք արդեն գնացել էին):

Ինչ (1. դերանուն. ի՞նչ տեսար դու այնտեղ. 2. շաղկապ. ինչ սկսել է այդ հարցով դրադվել, ազատ ժամանակ լողորդվին չի ունենում).

Ինչպե՞ս են առաջանում այսպիսի երևույթները, և ինչպիսի՞ մոտեցում պետք է ցուցաբերել դրանց նկատմամբ: Իհարկե, եթե բառն ունի մեկ որոշակի հիմնական իմաստ, պետք է անպայման դասվի միայն մեկ խոսքի մասի շարքը: Այդպիսին է հայերենի բառացին կազմի ճնշող մեծամասնությունը: Սակայն լեզուն կենդանի պրոցես է, լեզուն, նրա բաղադրիչները, այդ թվում և հատկապես բառերը, վերջիններիս իմաստները ենթակա են փոփոխությունների: Բառիմաստի փոփոխությունը կարող է այնպիսի բնույթի ու չափի հասնել, որ տվյալ բառը փոխի իր խոսքի մասացին հիմնական իմաստը: Սակայն այդպիսի փոփոխությունը միանգամից տեղի չի ունենում, և բառը մեկ խոսքի մասից մյուսը ցատկումով չի անցնում: Այն տեղի է ունենում պատմական երկար ժամանակաշրջանում, շատ դանդաղ կերպով, բառի երկրորդական, ածանցյալ իմաստի աստիճանաբար ակտիվանալու և բառի համար բնորոշ դառնալու ճանապարհով:

Բառի՝ նախկինում երկրորդական եղած իմաստի այսպիսի դարգացումը հասցնում է բառի արդեն իսկ ունեցած մեկ բնորոշ իմաստի կողքին երկրորդ բնորոշ իմաստի առկայության: Ծիշտ ինչպես երկրորդական իմաստը միանգամից չի վերածվում գլխավորի, բնորոշի, այնպես էլ բառի ունեցած նախկին բնորոշ իմաստը միանգամից չի վերանում: Ուստի՝ չի կարելի մեկ խոսքի մաս-

սից աստիճանաբար մյուսին անցնող բառն առաջին խոսքի մասի շարքը դասել ալիքան ժամանակ, քանի դեռ նա իր կապերն իսպառ չի խզել նրանից: Չէ՞ որ բառը որչափով հեռանում է մի խոսքի մասից, այնչափով ձեռք է բերում մի այլ խոսքի մասի հատկանիշ և մտնում է վերջինիս շարքը: Ըստ որում դրանք իրար հաջորդող երևույթներ չեն, այլ, ըստ էության, միևնույն երևույթի տարբեր կողմերը: Ընդունել, որ տվյալ բառը այս կամ այն չափով արդեն հեռացել է որևէ խոսքի մասից, ինքնին նշանակում է հաստատել, որ այդ նույն բառը հենց նույն չափով արդեն գտնվում է մի այլ խոսքի մասի մեջ: Եվ այդ հարցում ճիշտ կերպով կողմնորոշվել, փաստերը ճիշտ կերպով գնահատել հնարավոր կլինի միայն այն դեպքում, եթե ճիշտ նկատի առնվեն բառի բառային և քերականական հատկանիշների փոխհարաբերությունը, փոխալայմանավորվածությունը: Ուրեմն՝ այս կամ այն բառը լեզվի վարդապետան տվյալ շրջանում կարող է ունենալ երկու բնորոշ, բնդհանուր իմաստներ և համապատասխան քերականական հատկանիշներ:

Միևնույն բառի տարբեր բնորոշ իմաստներ ունենալու փաստը կարող է տեղի պատմական երկար ժամանակաշրջան, նույնիսկ դարեր. և, ի միջի այլոց, չպետք է կարծել, թե այդ պրոցեսը միշտ ավարտվում է բառի նոր ձևեր բերած բնորոշ իմաստի բացարձակ հաղթանակով:

Եթե լեզուն իր պատմական զարգացման հետևանքով մեզ կանգնեցնում է այսպիսի փաստերի առաջ, որոնց բնույթի մեջ էական դեր ունի բառի բառային և քերականական հատկանիշների փոխհարաբերությունը, ապա չպետք է աչք փակել դրանց նկատմամբ, այլ պետք է դրանք դիտել, քննել և պատճառաբանել:

Տարբեր խոսքի մասերի միջև տատանվող կամ իրենց բնորոշ հատկանիշներով տարբեր (գերազանցապես երկու) խոսքի մասերի պատկանող բառեր միշտ եղել են և կլինեն: Դա հատկապես խոսքի մասերի փոխանցումների հետ սերտորեն կապված, նրանց ուղեկցող երևույթ է: Խոսքի մասերի փոխանցումներն էլ կլինեն այնքան, որքան զարգանում է լեզուն, իսկ լեզուն զարգանում է իր գոյության ամբողջ ընթացքում:

Արդ, այդպիսի դեպքերում շարահյուսական ինչպիսի՞ կիրառությունների վրա պետք է հիմնվել: Այստեղ պետք է հաշվի առնել և՛ այն, որ խոսքի մասային պատկանելիության տեսակետից վերջինից կարելի մոմենտը շանտեսով և մյուս կողմից էլ խոսքի մասերի և նախադասության անդամների շփոթության տեղիք չտրվի: Այդ պատճառով էլ նման դեպքերում պետք է հիմք ընդունել բառերի ոչ թե ամեն մի շարահյուսական կիրառություն, այլ այնպիսի ճիմնական կիրառություններ, որոնք հանդիսանում են բառերի խոսքի մասային երկփեղկված իմաստի արտահայտությունների և հանդիսանում են այդպիսի երկփեղկվածությունն ապացուցող փաստեր: Այստեղից որոշակիորեն երևում է, որ բառային և քերականական հատկանիշների փոխհարաբերությունը ճիշտ հաշվի առնելը օգնում է լեզվական երևույթները, նույնիսկ, այսպես կոչված, ստատիկ վիճակում բնականաբար դիտարկելի և մոտկացնել:

Բառի բառային, ձևաբանական ու շարահյուսական հատկանիշների փոխհարաբերության տեսակետից ուշադրության արժանի է բառիմաստի փոփոխությունը և բառի խոսքի մասային պատկանելության փոփոխության (խոսքի մասերի փոխանցումների) փոխհարաբերության հարցը: Քանի որ խոսքի մասերի որոշման հարցում առաջնակարգ դերը պատկանում է բառերի ընդհանուր իմաս-

աին, նշանակում է, բառի մի խոսքի մասից մյուսին անցնելը բառի իմաստի փոփոխության հետ կապված երևույթ է: Այն աղպես է, ապա բառի իմաստի ինչպիսի՝ փոփոխության հետ է զուգակցվում խոսքի մասերի փոխանցումը: Նախ, պետք է նկատի ունենալ, որ բառի իմաստի փոփոխությունը և այդ նույն բառի խոսքի մասային պատկանելության փոփոխությունը իրար հաջորդող երևույթներ չեն, այլ զուգահեռ, միաժամանակ տեղի ունեցող երևույթ են, ավելի ճիշտ դրանք միեւնույն երևույթի տարրեր կոչվում են, որոնք զուգակցված են միմյանց հետ: Այսպես, չի կարելի կարծել, թե, օրինակ, այլ, ուր դերանունները նախ փոխել են իրենց բառային իմաստը և որից հետո փոխել իրենց խոսքի մասային հատկանիշը, մտել նաև շաղկապների շարքը: Այդ, ինչպես և նման բազմաթիվ բառերի բառային իմաստի և խոսքի մասային բնորոշ հատկանիշի փոփոխությունը միաժամանակյա, միմյանցով պայմանավորված երևույթներ են:

Բառի խոսքի մասային պատկանելության փոփոխության համար կարևոր է ոչ այնքան բառի իմաստի փոփոխության չափը, որքան այդ փոփոխության բնույթը, այդ պատճառով էլ երբեմն իմաստի համեմատաբար փոքր փոփոխությունը զուգակցվում է խոսքի մասային պատկանելության փոփոխությանը, իսկ ավելի մեծ փոփոխությունները կարող են չհանգեցնել այդպիսի հետևանքի: Այսպես, ապրել, ահագին, դեղ, ծախել բառերն անցյալում իրենց ունեցած իմաստի համեմատությամբ այժմ արտահայտում են միանգամայն այլ իմաստ: Հիշենք, որ ապրել հին հայերենում նշանակում էր «փրկվել, պրծնել», ահագին՝ «սոսկալի», դեղ՝ «բույս», ծախել՝ «ոչնչացնել»: Չնայած այս բառերը այժմ միանգամայն այլ իմաստ են ձևեր բերել, այնուամենայնիվ նրանք պահպանում են իրենց խոսքի մասային պատկանելությունը:

Մինչդեռ, օրինակ, տակ, շուրջ, վրա բառերը իրենց իմաստը համեմատաբար քիչ են փոխել, բայց մտել են կապերի շարքը և համարվում են անիսկական կապեր: Ո՞րն է դրա պատճառը: Բառի խոսքի մասային պատկանելության փոփոխության տեսակետից բառի իմաստային փոփոխությունը երկու տեսակի կարելի է բաժանել: Մեկն այն է, որ բառը փոխում է իր իմաստը քերականական և մասնավորապես շոթահյուսական հիմնական կիրառության փոփոխության բաղադրի վրա. այսպիսի փոփոխությունը սովորաբար զուգակցվում է բառի խոսքի մասային պատկանելության փոփոխությանը: Այսպես, գոյականը ածականի կարող է վերածվել, եթե նրա անկախ կիրառությունը վերածվում է հիմնականում կամ միայն կախյալ կիրառության, այն է՝ նա ստանձնում է առարկայի հատկանիշ ցույց տալու դեր, կատարում է որոշիչի ֆունկցիա: Ածականի՝ գոյական դառնալը կապված է ածական—որոշիչի որոշյալը շոթածածվելու (որի պատճառները տարբեր են լինում) և վերջինիս իմաստը ածական—որոշիչի մեջ առնելու հետ: Այլ խոսքի մասի՝ կապի վերածվելը կապված է տվյալ բառը հարաբերության իմաստով հաճախակի (ապա՝ հիմնականում և ի վերջո՝ միայն) գործածվելու փաստի հետ, որը զուգակցվում է բառի նյութական իմաստի կորուստով: Նույնը վերաբերում է նաև շաղկապին, իհարկե, որոշ յուրահատկությամբ:

Իսկ բառիմաստի այնպիսի փոփոխությունը, որը բառի քերականական, շոթահյուսական-կիրառական բաղադրի վրա չի առաջանում, այլ կատարվում է

¹ Սա տարրեր է ածականի գոյականաբար գործածությունից:

անկախ դրանից, սովորաբար առաջ չի բերում խոսքի մասային փոխանցում, եթե նույնիսկ տեղի ունենա բառիմաստի շրջում, ինչպես տեսանք վերը: Մենք չենք խոսում համեմատաբար մասնակի երևույթների մասին:

Սակայն խոսքի մասերի փոխանցումների համար հարցը միայն շարահյուսական կիրառությամբ չի կարող լուծվել, այլպես ինչո՞ւ ամեն մի շարահյուսական ածանցյալ կիրառություն չի ծավալվում, դառնում հիմնական ու զուգակցվում բառի խոսքի մասային փոփոխությամբ, և ինչո՞ւ այս կամ այն խոսքի մասի մեջ մտնող միայն որոշ բառեր են վերածվում այլ խոսքի մասի, իսկ մյուսները՝ ոչ:

Այս հարցում կարևոր են նաև հետևյալ հանգամանքները: Նախ, լեզվի մեջ պետք է զգացվի այդպիսի փոխանցման անհրաժեշտությունը՝ համապատասխան հարաբերություն արտահայտելու կամ այլ մղումով: Երկրորդ, փոխանցման համար տվյալ բառը պետք է ունենա բառային իմաստային հատկանիշի անհրաժեշտ տվյալներ: Ասենք, գոյականից, ածականից կապին անցնելու համար անհրաժեշտ է, որ տվյալ գոյականի, ածականի մեջ լինի հարաբերության իմաստի զգալի տարր, որը տվյալ բառին հնարավորություն կընձևոի գործածվելու հարաբերություն արտահայտելու համար: Այնպես որ եթե խոսքի մասերի փոխանցումները կատարվում են շարահյուսական-կիրառական բազայի վրա, ապա հենց դրա համար էական դեր ունի նաև բառի բառային իմաստը:

Վերջենք մի այլ հետաքրքրական հարց: Հայտնի է, որ նյութական իմաստ ունեցող բոլոր խոսքի մասերը թերթվում են, իսկ մակրայը չի թերթվում: Ո՞րն է մակրայի այս յուրահատկության պատճառը: Այս հարցին պատասխանելու համար պետք է հաշվի առնել մակրայի և՛ խոսքի մասային յուրահատուկ իմաստը, և՛ նրա շարահյուսական կիրառությունը:

Հատկանիշ ցույց տվող խոսքի մասերից բայը խոնարհվում է, իսկ ածականը և թվականը հոլովվում են գոյականաբար գործածվելիս: Մակրայները ածականների ու թվականների պես գոյականաբար գործածվել և հոլովվել չեն կարող, որովհետև նրանք, ի տարբերություն ածականների և թվականների, ցույց են տալիս ոչ թե առարկայի, այլ գործողության կամ հատկանիշի հատկանիշ: Իսկ ինչո՞ւ ածականը, թվականը գոյականաբար կարող են գործածվել, իսկ մակրայը չի կարող: Բառի գոյականաբար գործածվելը նշանակում է, որ հատկանիշ ցույց տվող բառը պահանջում է հատկանիշի իր իմաստը, միաժամանակ ստանում է առարկայի ընդհանուր իմաստ, սովորաբար այն առարկայի, որը կրում է այդ հատկանիշը: Այսպես, Անահիտը կուրսում միշտ առաջավորների (առաջավոր ուսանողների) շարքումն է: Այստեղ առաջավորների բառը, բայի հատկանիշի իմաստից, ունի նաև վերջինիս կրողի (ուսանող) ընդհանուր իմաստը: Իսկ դա էլ արդյունք է այն բանի, որ առարկայի սնունը իրրե որոշյալ չի գործածվում, և որոշիչը իր մեջ է առնում որոշյալի գաղափարը: Հենց այս հանգամանքն էլ այդ բառերին հնարավորություն է ընձևում հոլովվելու:

Ինչպես տեսնում ենք, ածականի և թվականի գոյականաբար գործածվելու հարցում վճռական դեր է կատարում դրանց՝ առարկայի հատկանիշ ցույց տալը և դրանով պայմանավորված՝ որոշիչի պաշտոնով հանդես գալու, այսինքն՝ առարկայի անվան վրա դրվելու հնարավորությունը:

Իսկ մակրայը դուրի է այդպիսի հնարավորությունից. չէ՞ որ նա, թեև նյութական իմաստ ունի, բայց ցույց է տալիս հատկանիշի հատկանիշ, հետևապես և դրվում է հատկանիշ ցույց տվող բառերի և ոչ թե առարկայի անվան վրա:

Այդ պատճառով էլ նա չունի գոյականաբար գործածվելու ոչ իմաստային հիմքը և ոչ էլ շարահյուսական հատկանիշը: Ահա թե ինչու նա զուրկ է հոլովվելու հնարավորությունից:

Այսպիսով, ինչպես երևում է վերոհիշյալից, լրացի բառային, ձևաբանական ու շարահյուսական հատկանիշների բնդհանրապես լեզվի բաղկացուցիչ տարրերի փոխհարաբերությունների ուսումնասիրումը անշուշտ մեծ չափով կնպաստի լեզվի, որպես ամբողջական համակարգի, կառուցվածքի ուսումնասիրմանը՝ թե՛ բնդհանուր օրինաչափությունների ուսումնասիրման առումով և թե՛ լեզվական առանձին երևույթների, փերականական տարրեր կատեգորիստիկայի էությունը բացահայտելու, պատճառաբանելու առումով:

ОДНА ИЗ ОЧЕРЕДНЫХ ЗАДАЧ СОВРЕМЕННОГО АРМЯНСКОГО ЯЗЫКОЗНАНИЯ

С. Г. АБРААМЯН

(Р е з ю м е)

С точки зрения всестороннего познания языка как цельной системы недостаточно одно только изучение его отдельных составных частей, которым занимается современное армянское (и не только армянское) языкознание. Как не могут образовать языка поставленные бок о бок составные части самого языка, так и одно лишь параллельное изучение его составных частей не может дать цельной картины данного языка. Необходимо также изучить взаимоотношение его составных частей и структурных элементов, чем будет восполнен один, весьма заметный, пробел в армянском языкознании. Вопрос важности этих взаимоотношений, по различным мотивам подчеркивали акад. Л. В. Щерба, акад. В. В. Виноградов и другие.

Указанный вопрос в статье рассматривается преимущественно как вопрос взаимоотношений лексических, морфологических и синтаксических признаков слова; эти взаимоотношения автор рассматривает в двух аспектах: 1) как собственный предмет изучения, цель изучения, 2) как вопрос метода изучения, способа исследования, что необходимо в достаточной мере учитывать при изучении составных частей языка или при выявлении той или иной особенности слова, отнюдь не смешивая их друг с другом.

Взаимоотношение лексических, морфологических, синтаксических признаков слова есть соотношение причинно-следственных взаимообус-

խոսքը վերաբերում է բնդհանուր օրինաչափությանը: Մակրայների շարքում կարելի է ցույց տալ միևնույն բառի որոշ հոլովաձևեր: Երանք հանդիսանում են մակրայի վերածված կամ վերածվող թերփող խոսքի մասի ձևաբանական հատկանիշի մնացուկները, որոնք բնորոշ չեն մակրային, որպես խոսքի մասի: Այսպիսի հոլովաձևերը կա՛մ վերածվել են, կա՛մ էլ կվերածվեն ինքնուրույն մակրայների (սեռականի ձևը՝ հավանաբար ածականի)՝ հիմա. շուտ-շուտով, նոր-նորից (ժամանակի իմաստով), հնում-հնուց, այժմ-այժմվա-այժմվանից:

ловленностей. По этой причине оно должно сыграть важную роль в освещении ряда вопросов развития языка, и в деле рассмотрения статического его состояния, как одного из этапов его развития.

В армянском языке (как и подобных ему по структуре языкам) рассматриваемое взаимоотношение в смысле причины и следствия можно представить в следующей ориентировочной схеме: лексический признак - морфологический признак - синтаксический признак.

В статье на основании фактического материала обоснована указанная схема. Рассмотрены также явления обратного взаимодействия, в частности роль синтаксического признака слова в вопросе его семантических и морфологических признаков.

Рассматривая языковые факты с точки зрения взаимоотношений лексических, морфологических и синтаксических признаков слов, в статье пересмотрены некоторые установки, принятые в армянском грамматиковедении, связанные с вопросами типов склонений, определения частей речи, связи несогласованного определения и определяемого.